

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌԱՆԿՈՒՄ
(1985 թ.)

Բ ա լ Վ ա Ր ի ա

«Օտար աղքատները Բալկանների մասին» մատենաշարով Սոֆիայի «Գիտություն և արվեստ» հրատարակչությունը լույս է ընծայել «Հալո՛ւ, ճանապարհորդներուն նոթերը Պալքաննե-րու մասին XVII—XIX դարերին» գիրքը, որի կազմողը և ծանոթագրությունների հեղինակն է Հակոբ Օրմանճյանը։ Գիրքը պարունակում է Բուլղարիայի մասին պատմական, ազգագրական, աշխարհագրական և տնտեսական տեղեկու-թյուններ, այդ թվում Սիմեոն Լեհացու 1608—1620 թթ. ճամփորդական նոթերը, Հովհաննես Թովմանյանի պատմությունից հատվածներ, Մի-քայել Սերաստացու, Ղուկաս Ինճիճյանի, Ստե-փանոս Ակոնցի գրվածքներից առանձին մասեր։ «Ներանից» տեղեկանում ենք, որ «ամեն մեկ հեղինակի գրություններն հետո տրված է բա-ցատրական բառարան, անձնական և աշխարհա-գրական անունների ցանկ»։ Գիրքը պատկերա-զարդ է, ունի քարտեզներ։

«Ներևան», 9 փետրվարի

Փետրվարի 27-ին Վառնայում տոնվել է զո-րավար Անդրանիկի ծննդյան 120-ամյակը։ Զե-կուցող Գրիգոր Գարաթերգիյանը հատկապես անդրադարձել է «ազգային հերոսի հեղափոխա-կան անցյալին»՝ Հայաստանի ազատագրության համար անոր երկարամյա մղած պայքարին։ Անդրանիկ Օղանյանի համար ժողովուրդը հյու-սեց սրտաբուխ երգեր, որոնք այսօր ալ սիրված ժողովրդական երգեր են»։

«Ներևան», 16 մարտի

Սոֆիայի «Ներևան» թերթի ապրիլի 20-ի հա-մարը ամբողջովին նվիրված է Մեծ եղեռնի 70-ամյակին։ Տպագրված է Պարույր Սևակի բա-նաստեղծությունը, Մեծ եղեռնի հուշարձանի և Ներևանի վ. Ի. Լենինի անվան հրապարակի լուսանկարները։ Հոգվածները տպագրված են նաև բուլղարերեն։ Մեծ եղեռնի 70-ամյակի սգա-

հանդեսներ են տեղի ունեցել Բուլղարիայի մի շարք այլ քաղաքներում։

«Ներևան», 20 ապրիլի

Բուլղարական ժողովրդական հանրապետու-թյունը Բուլղարիայի դեմ Թուրքիայի վարած զրպարտչական քաղաքականության առիթով հայտարարություն է արել և մեղադրել է Թուր-քիային իրրե ազգայնամոլ քաղաքականություն վարող բռնատիրական պետություն, որը ճնշում ու հալածում է ազգային փոքրամասնություն-ները։

Հայտարարության մեջ ի միջի այլոց ասված է. «Թուրքիո մեջ տարբեր ազգային փոքրամաս-նությունները կամ ցեղային խմբակցություննե-րը զրկված են ամեն իրավունքի, որ իրենց ար-տոնն զարգացնելու իրենց հարազատ մշակույթը և պահպանելու իրենց սովորությունները, Ըստ սլատական օրենքին (հոդված 26 և 41) թրքա-կան լեզուն կկաղմ միակ մայրենի լեզուն ամ-բողջ երկրին մեջ։ Ասկե կեցրակացնի թե նույ-նիսկ տարբեր ցեղային խմբակցություններու ժողովրդային երգերը պետք է մեկնարանվին թրքերենով, մինչ ֆուլբորական պարերը պետք է կատարվին թրքական ազգային տարազներ հագած պարողներու կողմից։ Ոչ թրքական անու-նները ընգունելի չեն երբեք... Կտրուկ կերպով արգիված է նորածինի մը տալ որևէ ցեղային խմբավորումի մը համար շնորոշիչ անուն մը... Թրքական ազգայնամոլության վերջնական նպա-տակը բացորոշ է՝ ցեղային ջնջում և ցեղասպա-նություն արարներուն, հույներուն, հայերուն և այլ աղգություններուն, բրոնք այսօր կրնակին Թուրքիո հողամասին վրա»։

«Լեաֆեռ», 7 սեպտեմբերի

Լ ի ր ա ն

«Արևը» հայտնում է, որ «Հայկական միջհաս-տատությանց համախմբումը» հրատարակած է եղեռնի 70-ամյակին նվիրված գեղեցիկ գրոշ-մաթուղթեր, որ պատկերված են Միծեռնակա-

բերդի Եղեռնի հուշարձանը և ԲՀԿ-ի հարու Ա. Գեղամյանի հուշարձանը՝ հայերեն, ֆրանսերեն, անգլերեն, սպաներեն լեզուներով։

«ԱԵԼ», 18 հոկտեմբերի

Նոյեմբերի 10-ին Ռամկավար ազատական կուսակցության լիբանանի շրջանային վարչությունը Բեյրութում, պաշտոնական հանդիսությամբ նշեց Արմենական Լուսակցության 100-ամյակը։

«Զարբուն», 8 նոյեմբերի

Վահան Թեքեյան վարժարանի սրահում դեկտեմբերի 8-ին տեղի է ունեցել Ռամկավար ազատական կուսակցության Մ. Փորթուղյան ակումբի կազմակերպած հերթական դասախոսություն և հրապարակային հանդիսություն՝ նվիրված Հայկական հարցին։ Զեկուցումով հանդես եկավ «Զարբուն» թերթի պատասխանատու խմբագիր Հակոբ Ավետիսյանը, որը կանգ առավ «Հայկական հարցին նորագույն զարգացումները» թեմայի վրա։

«Զարբուն», 14 դեկտեմբերի

Ա Ի Ի ա

Հայկազայն գաղթաշխարհի հիմնականում կազմակերպվել է 1920-ական թթ.։ Առաջին իսկ շրջանից իմանվել են դպրոցներ, որոնց շինարարությունը նոր թափ է ստացել 1950-ական թթ.։ Այսօր հայկազայնյուրեն ունի 15 վարժարան լուսավոր ու ընդարձակ դասասանյակներով, արդիական կահավորությամբ և այլ հարմարություններով։ Այդ դպրոցները նախակրթարաններ են, բացի մի երկուսից, որոնք ունեն մանկապարտեզ, նախակրթարան, միջնակարգ և երկրորդական բաժիններ։

«Նոր աշխարհ», 5 մարտի

Թեքեյան մշակութային միության Հայկազայնի տեղական վարչության հրավերով, հաղորդում է «Զարբուն»։ Բեյրութի նույնանուն միության ուսանողական թատերախումբը հոկտեմբերի 4-6-ը ելույթներ է ունեցել Կրթասիրաց բեմում՝ հայկազայնյուրեն ներկայացնելով «Երաժշտության ձայն» գործը, որը մինչ այդ մեծ ընդունելության էր արժանացել լիբանանահայության կողմից։ «Առաջին անգամ ըլլալով հայկազայն թատերասերին կհրամցվեին մանկապատանեկան այսպիսի գործ մը՝ համազարգացիային խանդավառություն ստեղծելով հայկազայն աշակերտություն թե առհասարակ թատերասեր շրջաններու մոտ»։

«Զարբուն», 1 նոյեմբերի

Հ ա ռ ա ռ ա ճ

Մայիսի 5-ին Նիկիայի հայաշատ թաղամասերից մեկում «Ազգային դիմադրության հայ պարտիզներու փողոց» է անվանվել այն փողոցը, որտեղ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ զոհվել են բազմաթիվ հայ երիտասարդներ։ Այս կապակցությամբ տեղի ունեցած արարողության բացումը, գրում է «Արև», կատարել է ճաղաքապետարանի խորհրդական Բ. Ռույա Լիպցուն, որ խոսքը տվել է քաղաքապետ պր. Սթեֆանո Լոդոթիսին։ Վերջինս ժամանաստեղծներ անդրադարձավ հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին, ինչպես նաև թուրքերու կողմից կատարված 1915-ի ցեղասպանության մասին, որու պատճառով հայ ժողովուրդին զավակները սփռվեցան աշխարհով մեկ, ինչպես նաև Հունաստան։ Այստեղ ևս հայերը իրենց մասնակցությունը բերին պատվով և աշխատանքով, ծառայելով և պատերազմելով կողք-կողքի հույն եղբայրներուն հետ՝ Հունաստանի ազատության համար... Իր խոսքին ետք պր. Լոդոթիս փողոցի նոր անվան արարողության բացումը կատարեց ծափող լույսերու տակ, վեր առնելով հունական դրոշակը, որ ծածկած էր պատին դաժնած մարմարե քարը, որուն վրա փորագրված էր «Ազգային դիմադրության հայ պալատ» բառերը։

Հաջորդ խոսողը եղել է այս միջոցառման ձեռնարկող պր. Վառվառյուհ Փիշտոֆյանը, որը, ինչպես հայտնում է «Արև», «անդրադարձավ պատերազմին՝ Հունաստանին և հույն ժողովրդին բերած աղետներուն, և թե ինչպես ազատամենչ հույն ժողովուրդը անգամ մը ևս խիզախորեն ոտքի կանգնեցավ, ընդդիմանալով հիթլերական Գերմանիո ազատագրելու համար մշակույթի օրրան Հունաստանը։ Ան հիշեց թե ինչպես հույն ընդդիմադիր ճակատի այդ պայքարողներուն կողքին պայքարեցան նաև հարյուրավոր հայ երիտասարդներ, որոնք իրենց կյանքը զոհեցին Հունաստանի ազատագրության համար»։

Այս արարողությանը մասնակցել են բազմաթիվ հույներ և հայեր։

«ԱԵԼ», 25 սեպտեմբերի

Հոկտեմբերի 11-ին Հունաստանի մայրաքաղաքում «Ժողովուրդներու իրավունքներու և ազատագրության հունական միությունը» կազմակերպել է դոկտ. Թեոֆանի դասախոսությունը՝ «Հայկական ցեղասպանության շուրջ գերմանական փատաթղթեր» թեմայով։ Դասախոսությունից առաջ ցուցադրվել է եղեռնի 70-ամյակի առթիվ պատրաստված ժապավեն, որի

նախաձեռնողն է եղել գերմանական ուղիղի և հեռուստատեսության կայանը:

Դասախոսությունը տեղի է ունեցել անգլերեն-նով և անմիջապես թարգմանվել է հունարենի: Թեևս Հոֆմանը անգրագարձել է հայկական ցեղասպանության վերաբերյալ գերմանական արխիվների փաստաթղթերին, հայերի գեմ գործադրված ցեղասպանության ժամանակ Գերմանիայի ունեցած դերին:

Դուկտ. Հոֆմանը նշել է, որ գերմանական արխիվները հայկական ցեղասպանության վերաբերյալ նյութերը պետք է լույս աշխարհ բերեն, որպեսզի մարդկությունը իրազեկ լինի պատմական անառարկելի ճշմարտությանը: Նա ավելացրել է, որ Լեփսիգի ավելի քան 500 վավերացված 109-ը առաջիկա մարտին պիտի հրատարակվեն ֆրանսերեն լեզվով:

«ԱՐԼ», 3 դեկտեմբերի

Թ ու Ր Ի Վ

Մտամբուլում լույս է տեսել Բարսեղ Թուղլաճյանի «Արփաշայ և շրջակայքը խորագրով Խորհրդերն գիրքը, որը ներկայացնում է Անի քաղաքը, նրա անցյալն ու ներկա ավերակ վիճակը: Գիրքը պարունակում է 75 գունավոր, սև և սպիտակ լուսանկարներ: Այս հատորը հանդիսանում է հայ պատմությանը նվիրված մատենաշարի առաջին գիրքը:

«ՆՈՐ ԱՇՆԱՐԵՑ», 28 փետրվարի

Թուրքական «Հուրիեթ» թերթը իր ապրիլի 27-ի համարի առաջին էջում «Գալիֆորնիո մեջ Հայաստան» խորագրով հոդվածում անդրադառնում է Եղեգնի 70-ամյակի առթիվ տեղի ունեցած ցույցերին:

Նկարագրելով ինքն Անչելիսում կայացած ցույցը, թերթը իր զայրույթն է հայտնում նահանգի կառավարիչ Ջորջ Տյոքմեճյանի կողմից ապրիլի 24-ը սուգի օր հայտարարելու և այս առթիվ հանրային շենքերի վրայի դրոշակները կիսով չափ վար առնելու համար:

Թերթը մանրամասն նկարագրում է Բեյրութում տեղի ունեցած քաղաքական հավաքը և մեքքեթումներ է անում արտասանված ելույթներին: Նյու Յորքում, Կանադայում, Փարիզում և այլ գաղթաշխատողներում տեղի ունեցած ցույցերը նկարագրելով՝ «Հուրիեթ»-ը նշում է, որ «ամենուրեք թուրքական դրոշակները այրված են և հայհույանքներ արձակված Թուրքիո դեմ»:

«ԱՐԱՐԱՏ», 22 հունիսի

«Զարթոնքը» հայտնում է. «Պոլսո Կեդրոնական վարժարանը 1986-ին կդադան հարյուր տարեկան: Ներսես պատրիարք Վարժապետյանի կողմից հիմնադրված այս վարժարանին սեմին ներսմտած են Մեծարենցը, Թեքեյանը, Նիկողոս Սարաֆյանը, Աճառյանը, Արշակ Ալպոյաճյանը, Զոպանյանը, Երուխանը և բազմաթիվ ուրիշներ, որոնց նպաստը մեծ եղած է արևմտահայ և սփյուռքահայ կյանքի ու մանավանդ մշակութի վառ պահպանման գործին»:

«Զարթոնք», 13 դեկտեմբերի

Ի Ր Մ Ն

Ի պատասխան Սպահանի համալսարանի կողմից ուղարկված նամակի, Իրանի մշակույթի և բարձրագույն ուսմանց նախարարությունը պաշտոնական գրությամբ համաձայնություն է տվել Սպահանի համալսարանում հայոց լեզվի և գրականության բաժնի վերաբացման մասին:

«ԱՐԱՐԱՏ», 11 հունիսի

Լ Յ Ո Ւ Բ Ս Ե Մ Ե Ր Ո Ր Գ

«Կերեմեր-Մյուլլեր» հրատարակչությունը լույս է բնծայել «Հայաստանի քարերը» վերնագրով գիրքը Լյուքսեմբուրգում գործող Ա. Ս. Պուլկինի անվան մշակութային կենտրոնի մասնակցությամբ: Այն պատրաստել են «Լյուքսեմբուրգ-ՍՍՀՄ» ընկերության անգամներ, նշանավոր հասարակական գործիչ, հրապարակախոս Ժորժ Բուլոնը և հայտնի գծանկարիչ ու ֆոտոթղթակից Ռոբեր Ռաուսը, որոնք ձանապարհորդել են Հայաստանում: Գրքի առաջաբանը գրել են Լյուքսեմբուրգում սովետական դեսպան Կ. Ուզումյանը և մշակութային կենտրոնի գլխավոր քարտուղար Իվոնա Ֆրիշը:

Այս հատորը ներկայացնում է Հայաստանի անցյալն ու ներկան. գիրքը նկարագրված է:

«ՆՐԼԱՆԸ», 9 փետրվարի

Ֆ Ե Ր Մ Ն Ի Վ

Փետրվարի 17-ին Վալանտում կատարվել է Եղեգնի հուշարձանի բացումը, որին մասնակցել են Փարիզի հայոց առաջնորդ Գյուլտեպյան, Նազգաշյանը, Վալանտի քաղաքապետ Փեսը, քաղաքապետարանի խորհրդականներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, հայկական բոլոր միու-

ժյուներին և հասարակության ներկայացուցիչները Արարողության ժամանակ ելույթ են ունեցել Հայ ազգային միության նախագահ գեղտ. Դաճարյանը, Գյուտ եպիսկոպոսը, քաղաքապետ Փենը, որն ասել է, թե՛ «թուրք պետությունը պետք է ճանաչի 1915-ի ցեղասպանությունը: Վերջում ծաղկեփնջեր են գրվել հուշարձանին, որի հեղինակն է Թորոս Ռաստկելեյանը:

«Ջաբրոնե», 12 մարտի

Ֆրանսիա

Իտալիա

Շվեյցարիա

Լիոնի հայությունը մեծ շուքով նշել է Մեծ եղեռնի 70-ամյակը: Եւրոյ երեք հազար մարդ է հավաքվել Լիոնի Սեն-Ժան մայր տաճարում և շրջակայքում: Պատարագ է մատուցել եպս. Զաքարյանը: Արարողության ավարտից հետո թափուր ուղղվել է դեպի Պելլուտ հրապարակը, որտեղ Միջինատկաբեղի հուշարձանի նմանակ հուշարձանի մոտ նստել են եղեռնից վերապրող 70 ծերունիները ջահերը ձեռքներին: Արարողության ընթացքում ջահերը փոխանցվել են պատանիներին: Այստեղ ներկա են եղել ֆրանսիացի պաշտոնական անձինք:

Միլանում ապրիլի 24-ին Ս. Քառասուն Մանկունք եկեղեցում հավաքվել է հոծ բազմություն: Սարգիս ք.Ն. Սարգսյանը պատարագ է մատուցել: Տեղի է ունեցել հանդիսություն, որի ընթացքում եղել են հայերեն և իտալերեն ելույթներ և այնուհետև օրվան համապատասխան գեղարվեստական բաժին:

Ժնևում ևս մեծ հանդիսավորությամբ նշվել է եղեռնի 70-ամյակը շվեյցարահայ վարչության նախաձեռնությամբ: Համալսարանի սրահում տեղի է ունեցել հրապարակային հանդես: Տեղի մամուլը լայնորեն արձագանքել է եղեռնի 70-ամյակին:

Լյուցեռնում ևս նշվել է Ապրիլյան եղեռնի 70-ամյակը:

«Արարատ», 29 հունիսի

Ֆրանսիա

Ֆրանսիայում լույս է տեսել Հենրի Մորգենթաուի «Հուշեր» ֆրանսերեն նոր թարգմանությունը: Հատորին կից հրատարակված է նաև պետական հնարարման մի շարք անտիպ փաստաթղթեր: Առաջաբանը գրել է Ժերար Շալյանը:

Այս էպոպեոսությամբ «Մոնդ» թերթի մարտի 20-ի համարում տպված է Ժան Ամալիի «Հեն-

րի Մորգենթաուի գլխավոր վկայության վերահրատարակությունը խորագրով հոդվածը:

«Արարատ», 11 հուլիսի

Փարիզում, հոկտեմբերի 6-ին Հ.Բ.Բ.Մ.-ի տեղական մասնաճյուղի և ծայրային բարեկամական միության նախաձեռնությամբ նշվել է Վահան Տերյանի ծննդյան 100-ամյակը:

«Ջաբրոնե», 7 հոկտեմբերի

Մարսելի Հայ մշակութի տան նախաձեռնությամբ նշվել է Կոմիտասի մահվան 50-ամյակը: Ջեկուցումներից հետո եղել է գեղարվեստական բաժին:

«Արև», 2 դեկտեմբերի

Մարսելի հայկական Կեդրոնական վարչության նախաձեռնությամբ և Դեսինի ու Վիեննայի մասնաճյուղերի մասնակցությամբ նշվել է Վասպուրականի հերոսամարտի 70-ամյակը:

«Արև», 2 դեկտեմբերի

Իտալիա

Իտալիայի «Արես» հրատարակչությունը 1984 թ. լույս է բերել «Հայ հարտարապետության վարվերագրեր» մատենաշարի 12-րդ հատորը՝ նվիրված Անի քաղաքին: Այն հարուստ է գունավոր և սև-սպիտակ լուսանկարներով, տրված է Անիի հուշարձանների հարտարապետական ու գեղարվեստական վերլուծությունը: Գիրքն ունի Անիին և շրջակայքին վերաբերող երեք քարտեզ, ժամանակագրական և մատենագիտական ցանկեր:

«Նուր աշխարհ», 26 փետրվարի

Վենետիկի Մուրատ Ռաֆայելյան վարժարանում մայիսի 6—10-ը կազմակերպվել է հայկական երաժշտությանը նվիրված դասընթաց «Բաղդատական երաժշտության միջազգային կաճառի» նախաձեռնությամբ: Ինչպես գրում է «Արևը», սույն դասընթացը մաս կկազմեր միջին արևելյան երաժշտություններու մասին դասընթացներու շարքի մը, որ վերահիշյալ կաճառը կազմակերպած էր Վենետիկի մեջ: Դասախոսած է Փարիզի «Հայկական երաժշտական համույթի» անդամ Արամ Քերովյան, իսկ իր մասնակցությունը բերած է սույն համույթի մենբեր-չուհի Վերոնիկա Փաթթի-Քերովյան, մեկնաբանելով զանազան երգեր: Ներկայացված են հայ երգի գլխավոր ճյուղերը՝ գուսանական, ե-

կենդանական և ժողովրդական, ինչպես նաև ներկայիս երաժշտությունը:

«Արև», 12 սեպտեմբերի

Ա Վ Ա Տ Ր Ի Մ

1985 թ. սեպտեմբերի 22-ին Վիեննայի քաղաքապետի և Ազգային համագումարի նախագահ Լուի Մերմայի հովանավորությամբ հանդիսավորությամբ կատարվել է Վիեննայի «Հայ մշակույթի տան» բացումը:

«Ջաբրոնեֆ», 8 նոյեմբերի

Ա Ն Ղ Ի Մ

Հ.Բ.Ը.Մ. մշակութային հանձնախումբը Լոնդոնում կազմակերպել է Դանիել Վարուժանի ծննդյան 100-ամյակին նվիրված երեկույթ: Մեծ բանաստեղծի կյանքի և ստեղծագործության մասին ելույթ է ունեցել Կարպիս Եսայանը: Վարուժանի և Ռուբեն Սեաֆի նահատակության մասին կարդացվել են հուշագրություններ, երեկույթում տրվել է գեղարվեստական բաժին:

Մշակութային հանձնախումբը այս տարվա համար նախապատրաստել է հարուստ ծրագիր: Երկրորդ միջոցառումն է լինելու դրական երեկույթ՝ նվիրված Հովհաննես Շիրազի հիշատակին:

«Արև», 3 հունվարի

Լոնդոնում Հ.Բ.Ը.Մ. մշակութային հանձնախումբը կազմակերպել է երգահանդես, որը տեղի է ունեցել 1985 թ. օգոստոսի 3-ին Քենդիկդըն Թաուն Հոլի համերգասրահում: Ելույթ է ունեցել Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի շրջանավարտ, տենոր Տիգրան Որբերյանը, որը առաջին բաժնում կատարել է եվրոպական երգեր և արիաններ, իսկ երկրորդ բաժնում Կոմիտասի, Ալ. Սպենդիարյանի, Ս. Բաբխուզյանի, Ա. Տիգրանյանի և այլ կոմպոզիտորների երգերը:

Ինչպես նշում է թերթը, Տիգրան Որբերյանը լոնդոնահայ գաղութի այն երաժիշտն է, որ չանում է հայ երաժշտությունը տարածել գաղթօջախում: Նա ղեկավարում է «Արարատ» երգիչարի անսամբլը:

«Նուր աշխարհ», 3 սեպտեմբերի

Օքսֆորդի համալսարանը կազմակերպել է «Եվրոպայի և Միջին Արևելքի քսաներորդ դարի գաղթականները» թեմայով դասախոսությունների շարք: Անգլիացի պատմաբան Քրիսթոֆեր Ուոքերը դասախոսել է «Հայ գաղթականներ.

պատահականություն» թեմայով: Հարցի մասին: Նա փաստերով ցույց է տվել, որ «1915-ի հայերու աքսորը և մահը կանխամտածված էր»:

Ինչպես հայտնում է «Լրաբերը», «Թուրքիան նախապես միջամտած էր Արտաքին գործոց նախարարության մոտ, իսկ դասախոսության ներկա գտնվող թուրքեր անվանադիր խոսքեր կատարեցին դասախոսին դեմ»:

«Լրաբեր», 14 սեպտեմբերի

«Ջաբրոնեֆ», 9 նոյեմբերի

Ա Ր Ղ Ե Ն Ո Ւ Ն Մ

Արգենտինահայությունը մեծ շուքով նշել է Մեծ եղեռնի 70-ամյակը: Զանազան միջոցառումներին մասնակցել են էրկրի պետական և քաղաքական շրջանների, ինչպես նաև կուսակցությունների ներկայացուցիչներ:

«Շաբոն», 5 մայիսի

Ո Ր Ո Ւ Գ Վ Մ Յ

Մոնտեվիդեոյում գործում է «Ռադիո Արմենիա» ռադիոժամբ, որի 50-ամյա հոբելյանը նշվել է մեծ շուքով: Հաղորդումները ներկա են եղել Ուրուգվայի Հանրապետության նախագահ ղոկտ. Խոսե Մարիա Սանկինսթեյն, երեք նախարարներ, պետական պատասխանատու անձեր, ինչպես նաև Արգենտինայի, Բոադիլիայի և Ուրուգվայի հայ գաղթօջախներից հոգևորական և ազգային ներկայացուցիչներ:

«Շաբոն», 21 նոյիսի

Ա Մ Ն

Ուստրի (Մասաչուսեթս) Արվեստի թանգարանը հուլիսի 13-ին բաբել է հայկական գորգերի ցուցահանդեսը, բոլոր նշվում է «Հյուսիս-արևելքի վաճառականներ և թագավորներ—Հայաստանի արձանագրված գորգերը»:

Ցուցահանդեսը սկզբում ցուցադրվել է Ֆորթ Ուլերթ, Թեքսասի Գիմպել թանգարանում, ապա Մերիլենդում: Այս ցուցահանդեսի կապակցությամբ հուլիսի 21-ին ղոկտ. Լյուսի Տեր-Մանվելյանը Ուստրի թանգարանի սրահում զեկուցում է կարդացել «Աղամաններ, վիշապներ և խաչեր—Հայկական գորգագործության արվեստը» թեմայով: Ի դեպ, նա կազմել է նաև հայկական գորգագործության պատմության գիտական շաբադրանքը ներկայացնող պատկերազարդ մի հատոր: Օգոստոսի 10—11-ին թանգարանում գորգերի մասին պատմել է Առթուր Կրիկորյան:

ներ, Սեպտեմբերի 14-ին թանգարանում տեղի է ունեցել անվանի երգեչոհնահար Պերճ Ժամկոչյանի համերգը: Յուզահանգեսը տևելու է մինչև սեպտեմբերի 15-ը:

«ԱՐԵ», 5 օգոստոսի

Կոլումբիայի համալսարանի գրադարանը ունի հայկական գրքերի և պարբերականների հավաքածու, որն օրըստօրե հարստանում է շնորհիվ տեր և տիկին Սարգիս Հակոբյանների 1979-ին հիմնած «Հակոբյան հավաքածու» հիմնադրումի, որի միջոցով հնարավորություն է ստեղծվել ձեռք բերելու զանազան ակադեմիական հրատարակություններ և դրանց մանրամասնականները:

Համաձայն գրափոխանակության վերաբերյալ կնքված Համաձայնագրի, գրադարանը ստանում է Հայաստանում հրատարակվող գրքեր և զանազան թւրթուրներ, Գրադարանը հարստանում է նաև հայ ընտանիքների կողմից հայերեն գրքերի և հին թերթերի հավաքածուների նվիրատվության շնորհիվ, որոնք շատ արժեքավոր և հազվագյուտ օրինակներ են պարունակում:

«ԱՐԵ», 12 Նոյեմբերի

Նյու Յորքում լույս է տեսել Վահրամ Կյոքճյանի «Թուրքերը պատմության դատաստանին առջև» անգլերեն լեզվով գիրքը: 1895-ի կոտորածների և 1915-ի Մեծ եղեռնի մասին (227 էջ) գրքում զետեղված են մոտ երեսուն պատմաբանների, լրագրողների և ակադեմիկոսների վերաբերյալ տվյալներ, որոնց թվում են՝ Ժակ դը Մորգանը, Հերբերտ Գիլբերտը, Պոլ Լեֆսխուր, Մորգենթաու, Արնոլդ Թոյնբին, Թուրք պրոֆ. Ահմետ էմինը և ուրիշներ: Հեղինակն օգտագործել է նաև Վաշինգտոնի պետական արխիվների գիվանագիտական բաժնի հայերի վերաբերյալ գրությունները:

«Ջարթոնֆ», 7 Նոյեմբերի

Լոս Անջելեսում Միացյալ Նահանգների Իրանահայ միության տիկնանց բաժնի նախագահուհի Ռոզա Կոկտեմբերի 26-ին տեղի է ունեցել համագումար ռեյս կնոջ երթը երեկ և այսօր՝ թեմայով, որի ժամանակ ելույթ են ունեցել Անահիտ Նուրիդյանը, Մազլեն Քարաճյանը և ուրիշներ:

«Ջարթոնֆ», 13 Նոյեմբերի

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ